ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 հոկտեմբեր, 2019 թվականի № 52-Լ

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՆՐԱՅԻՆ ՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԼՐԱԳՐՈՂՆԵՐԻ՝ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՑԱՆՑԵՐԻՑ ՕԳՏՎԵԼՈՒ ԷԹԻԿԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի, նույն հոդվածի 2-րդ մասի պահանջներով՝ Հանրային հեռուստառադիոընկերության խորհուրդը ո ր ո շ ու մ է.

1. Հաստատել հանրային հեռուստաընկերության և հանրային ռադիոընկերության լրագրողների՝ սոցիալական ցանցերից օգտվելու էթիկական կանոնները համաձայն սույն որոշման հավելված № 1-ի:

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ Ա. ՇԻՐԻՆՅԱՆ

29 հոկտեմբեր, 2019 թվականի

ք. Երևան

Հավելված 1
Հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի
29 հոկտեմբերի, 2019 թ. N 52-Լ որոշման

Հաստատում եմ՝
Հանրային հեռուստառադիոընկերության
խորհրդի նախագահ

_____ Ա. Շիրինյան

29 հոկտեմբերի, 2019 թ.

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՑԱՆՑԵՐԻՑ ՕԳՏՎԵԼՈՒ ԷԹԻԿԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

Հանրային հեռուստաընկերության և հանրային ռադիոընկերության լրագրողների համար

Հանրային հեռուստաընկերության և հանրային ռադիոընկերության լրագրողները սոցիալական ցանցերում հանրայնորեն շփվելիս պարտավոր են պահպանել հետևյալ էթիկական կանոնները:

1.Հանրային հեռուստաընկերության և հանրային ռադիոընկերության լրագրողները չեն կարող հրապարակել նյութեր, որոնք հակասում են Հայաստանի լրատվամիջոցների և լրագրողների էթիկական կանոնագրին, հանրային հեռարձակման սկզբունքներին ու բովանդակային սահմանափակումներին:

2. Հանրային հեռուստաընկերության և հանրային ռադիոընկերության լրագրողները չեն կարող սոցցանցերում հրապարակել այնպիսի գրառում, լուսանկար, տեսանյութ, հղում կամ մեկնաբանություն, որը՝
- վնասում է, նվաստացնում կամ որևէ այլ եղանակով արատավորում է Հայաստանի Հանրապետության հեղինակությունը.
- վիրավորում է որևէ անձի արժանապատվությունը կամ որևէ կազմակերպության բարի համբավը՝ դիտավորությամբ կամ արատավորելու նպատակով.
- ցուցաբերում է խտրականություն՝ սեռի, կրոնի, ռասայական, էթնիկ և այլ հատկանիշներով.
- օգտագործում է հայհոյանք, ատելության խոսք կամ սպառնալիք:

Լրացուցիչ պարզաբանումներ
- սոցիալական ցանցում տարածած հրապարակումը կամ մեկնաբանությունը հանրային տեղեկություն է՝ անկախ նրանից, թե հասանելիության ինչ կարգավորում է նախատեսվել՝ հրապարակային, թե՝ միայն ընկերների համար
- հաշվի առնելով հանրային հեռարձակողի անաչառության և չեզոքության սկզբունքը՝ լրագրողներին խորհուրդ է տրվում չարտահայտել ծայրահեղ քաղաքական կամ կուսակցական դիրքորոշումներ

- նկատի ունենալ, որ այլ օգտատերերի հրապարակումների կամ մեկնաբանությունների տակ դրված հավանության նշանները կարող են ընկալվել որպես տեսակետի

հաստատում կամ համաձայնություն և մեկնաբանվել որպես Հանրային հեռուստաընկերության և/կամ Հանրային ռադիոընկերության դիրքորոշում
- քննադատական կարծիքներին, բացասական գնահատականներին և մեկնաբանություններին կարելի է պատասխանել միայն քաղաքավարի կամ անտեսել դրանք
- շահերի բախում չառաջացնելու համար ցանկալի է հրաժարվել այլ հեռուստառադիոընկերությունների և լրատվամիջոցների գործունեության մասին ծայրահեղ բացասական կամ դրական կարծիքներ արտահայտելուց
- անթույլատրելի է քննարկել հեռուստառադիոընկերության ներքին խոհանոցը՝ եթեր հեռարձակելու, մասնակիցներ հրավիրելու, կադրային փոփոխությունների վերաբերյալ որոշումները, եթե դրանք պաշտոնապես նախատեսված չեն բաց հրապարակման կամ հանրային քննարկման համար: